




ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022

- » Ընդհանուր ակտիվները մեկ տարվա ընթացքում աճել են 32.0%-ով և կազմել 357,510 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 12.1%:
- » Ընդհանուր պարտավորությունները 2021թ.-ի համեմատ աճել են 32.5%-ով և կազմել 305,031 մլն ՀՀ դրամ, իսկ 2012թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 12.1%:
- » Հաճախորդներին տրված վարկերը հաշվետու տարում ավելացել են 10.0%-ով և կազմել 166,446 մլն ՀՀ դրամ, իսկ միջին աճի տեմպը վերջին տասը տարիների համար կազմել է 12.0%:
- » Արժեթղթերում ներդրումները աճել են 9.9%-ով և կազմել 51,458 մլն ՀՀ դրամ: 2012թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 20.5%:
- » Բանկի կողմից ներգրավված ժամկետային ավանդները աճել են 22.8%-ով և կազմել 87,677 մլն ՀՀ դրամ, իսկ 2012թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 15.4%: Միայն ֆիզիկական անձանց միջոցները մեկ տարում աճել են 19.0%-ով, իսկ իրավաբանական անձանց միջոցները՝ 40.9%-ով: Ցախհանջ հաշիվների մնացորդները աճել են 165.7%-ով և կազմել 141,736 մլն ՀՀ դրամ, որտեղ ֆիզիկական անձանց մասնաբաժինը կազմել է 39.3%, իսկ իրավաբանական անձանց մասնաբաժինը՝ 60.7%:
- » Բանկի զուտ տոկոսային մարժան 2021թ.-ի համեմատ աճել է 0.5 տոկոսային կետով և կազմել 3.7%:
- » Բանկի զուտ շահույթը կազմել է 13,172 մլն ՀՀ դրամ:
- » Բանկի ընդհանուր կապիտալը 2021թ.-ի համեմատ աճել է 29.2%-ով և կազմել 52,479 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 12.3%:
- » Բանկը շարունակում է իր վերաբրենդավորման գործընթացը:
- » 2022 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի մասնաճյուղային ցանցն ընդգրկել է 51 մասնաճյուղ:



Ակտիվների և պասիվների կառավարման արդյունավետության բարձրացում

Թվայնացման աստիճանի բարձրացում՝ թվային փոխակերպում

ՄՌԿ քաղաքականության համապարփակ բարեփոխումների իրականացում

Միջազգային գործընկերների ցանցի ընդլայնում

Կայուն զարգացման նպատակներ և «կանաչ» ռազմավարություն



ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի հարգելի՛ բաժնետերեր, գործընկերներ և հաճախորդներ,

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն իր գործունեության 31-րդ տարին ամփոփեց գերազանց արդյունքներով: Մենք համարձակ քայլերով գնացել ենք նորարարական գաղափարների հետևից: Փուլ առ փուլ զարգացրել ենք հաճախորդների հեռավար սպասարկման համակարգը, բարձրացրել ենք թվային տեխնոլոգիաների և բանկային ծառայությունների մատուցման որակը: Շարունակական քայլեր են կատարվել անձնակազմի ուսուցման և զարգացման ուղղությամբ:

Բանկը հետ չի կանգնել իր որդեգրած ռազմավարությունից և հաստատական քայլերով շարժվել է առաջ: Դրա արդյունքում 2022թ.-ին մենք ապահովեցինք ավելի թափանցիկ և հրապարակային գործունեություն, ինչպես նաև ռիսկերի կառավարման առավել ժամանակակից մոտեցում: Հենց վերոնշյալի արդյունքում է, որ հաշվետու տարում մեզ միացան 46,926 նոր հաճախորդներ, որոնցից 39,112 հաճախորդ մեզ վստահեցին իրենց հաշիվների սպասարկումը: Բանկին միացան նաև 24,537 նոր քարտապաններ եւ 1,230 նոր ավանդուտուներ: Բանկի մոբայլ հավելվածից օգտվողների տոկոսային քանակը նույնպես աճ գրանցեց:

Բանկը խորացրել է իր հարաբերությունները միջազգային գործընկերների հետ, ստեղծել է նոր կապեր՝ դառնալով կապող օղակ ինչպես Հայաստանի Հանրապետության և աշխարհի, այնպես էլ ՀՀ քաղաքացիների և սփյուռքի համար:

Բանկը գրեթե ամբողջությամբ լրացրել է «NASIRA» ծրագրով երաշխավորված ֆինանսավորման ծավալը և ձեռք է բերել նոր ծրագրերի իրականացման պայմանավորվածություններ:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը հուսալի և երկարաժամկետ գործընկեր է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար, թե՛ ՀՀ-ում եւ թե՛ արտասահմանում: Այս ամենի վառ ցուցիչը Բանկի բաժնետոմսերի արժևորումն է, որոնց արժեքն ի տարբերություն 2021թ.-ի՝ 2022թ.-ի ավարտին աճել է շուրջ 16%-ով:

Թեեւ անցած տարին ընձեռեց նոր հնարավորություններ հայրենական ֆինանսական շուկայի համար, միեւնոյն ժամանակ արտաքին ճնշումներն ու անկայունությունը շարունակեցին մարտահրավերներ նետել: Այս պայմաններում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը հետամուտ եղավ իր ճկուն ռազմավարության եւ մեխանիզմների ամրապնդմանը:

Առավել քան վստահ եմ, որ այս ամբողջ ընթացքում կարողացել ենք մեր առջև ծառացած յուրաքանչյուր խնդրի կենտրոնում պահել հաճախորդի շահերը:

Արհեստավարժ եւ նվիրված թիմով, գործընկերների եւ հաճախորդների մեծ բանակով մենք այսօր վստահությամբ ենք նայում բանկի ապագային եւ հանձնառու ենք մեր հաճախորդների բարեկեցությանը եւ մեր Հայրենիքի բարգավաճմանը:

Հարգելի՛ բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ,

2022 թվականը ևս լի էր մարտահրավերներով, սակայն դրանց արդյունքում ստեղծված իրավիճակները տարբեր ուղղություններով զարգանալու հնարավորություն են տվել: Հավասարակշռված գործողությունների արդյունքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿԻՆ հաջողվել է տարին ամփոփել ավելի բարձր ցուցանիշներով՝ գերազանցելով պլանային ցուցանիշները:

2022թ.-ին ՀՀ տնտեսությունում արձանագրվել է տնտեսական ակտիվության բարձր մակարդակ, որը զուգորդվել է աշխատուժի և կապիտալի ներհոսքով: Արդյունքում բանկային համակարգը սկսել է ավելի մեծ ծավալի ֆինանսական գործառնություններ իրականացնել՝ ստանալով հավելյալ եկամուտներ գեներացնելու հնարավորություն: 2022թ.-ի տարեկան արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 357,510 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշի համեմատ աճելով 32.0%-ով կամ 86.6 մլրդ ՀՀ դրամով: Ակտիվային գործառնությունների տեսանկյունից վարկային ներդրումները եղել են համաչափ և ըստ պլանավորված ցուցանիշների: Չնայած տարվա ընթացքում բարձր աճի տեմպեր արձանագրելու ստեղծված հնարավորություններին՝ Բանկը հավատարիմ է մնացել նախկինում սահմանված վարկային ներդրումների օրգանիկ աճի սկզբունքներին: Հետևաբար, հաճախորդներին տրված վարկերը հաշվետու տարում ավելացել են 10.0%-ով և կազմել 166,446 մլն ՀՀ դրամ: Հատկանշական է, որ 2022թ. Բանկում ձևավորվել է լիզինգի գործառնությունների ստորաբաժանում և վերամշակվել են լիզինգի հետ կապված գործընթացները:



Անցած տարի ևս բարձր գնահատանքի ենք արժանացել տարբեր միջազգային հեղինակավոր ֆինանսական կառույցների, գործընկերների կողմից: Ria Money Transfer համակարգի կողմից արժանացել ենք «Տարվա գործընկեր» մրցանակին, «Global Finance» միջազգային հեղինակավոր ամսագրի կողմից՝ Հայաստանի «Լավագույն ենթապահառու բանկ» անվանակարգին, Հայաստանի ֆոնդային բորսայի և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից՝ «Կորպորատիվ արժեթղթերի լավագույն շուկա ստեղծող» մրցանակին, «Visa համակարգով Apple Pay և Google Pay նախագծերի արագ և անխափան իրականացում» մրցանակին:

Երրորդ տարին է Բանկն իրեն դիրքավորել որպես սոցիալապես պատասխանատու ֆինանսական հաստատություն՝ հիմքում ունենալով կրթությունը որպես ռազմավարական առանցքային ուղղություններից մեկը: 2022թ.-ին ֆինանսավորվել են «Ուսանողի տուն» սոցիալական ծրագրի շրջանակներում մասնագիտական կողմնորոշման ճամբարը, «ՄշակութաMET» նախաձեռնության ամփոփիչ համերգը, «Հալք» օդային ինժեներության մրցույթը, «4090 Բարեգործական» հիմնադրամի բարեգործական համերգը և քաղցկեղով հիվանդ երեխաների աջակցության համար կազմակերպված «City of Smile» բարեգործական ընթերիքը:

2022թ.-ին Հայաստանի բանկերի միության հետ համատեղ մի շարք աշխատանքներ են տարվել բանկային համակարգի զարգացման և կատարելագործման ուղղությամբ՝ պետական և մասնավոր կառույցների հետ ակտիվ համագործակցություն, բանկային գործունեության կարգավորմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես օրենսդրական նախագծերի ուղղությամբ, միջազգային կառույցների հետ համագործակցություն և անդամակցություն:

Ամփոփելով խոսքս՝ կարևոր եմ համարում նշել, որ 2020 թվականից ի վեր ստանձնելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի ճգնաժամային կառավարման ղեկը, պատվով հաղթահարել ենք ճգնաժամային տարիների ընթացքում ծառացած մարտահրավերները, որին մեծապես նպաստել է Բանկի արհեստավարժ թիմը: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի բոլոր գործարքներն իրականացվել են, իսկ գործարար հարաբերությունները հաստատվել համապատասխանության պահանջների խիստ պահպանմամբ: Ըստ էության ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի գործողությունները ճգնաժամային իրավիճակում ուղղված են եղել մարտահրավերների ռիսկերը մեղմելուն՝ ռիսկերի կառավարման հնարավորինս գործուն և արդյունավետ համակարգերի կիրառմամբ, իսկ «Ճգնաժամի կառավարման և արտակարգ իրավիճակներում բիզնեսի անընդհատության ապահովման քաղաքականության» առկայությունը ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ում միայն գործել է ի նպաստ:

- » ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը և Հարավարևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամը (EFSE) կնքել են 10 մլն ԱՄՆ դոլարի պայմանագիր, որն ուղղվել է ՓՄՁ ոլորտի ֆինանսավորմանը:
- » ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը և «Բլյու Օրչարդ» Միկրոֆինանսավորման հիմնադրամը (Blue Orchard Microfinance Fund) կնքել են 10 մլն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որն ուղղվել է միկրո և ՓՄՁ ոլորտի ֆինանսավորմանը:
- » Տարեվերջի դրությամբ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը գրեթե ամբողջությամբ սպառել է «NASIRA» ծրագրի շրջանակներում կնքված երաշխիքի 10մլն ԱՄՆ դոլարի սահմանաչափը՝ վարկավորելով նախանշված թիրախային խմբերին:
- » ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը երկրորդ տարին անընդմեջ Global Finance միջազգային հեղինակավոր ամսագրի մասնագիտական թիմի կողմից ճանաչվել է Հայաստանի «**Լավագույն ենթապահառու բանկ**»:
- » ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը **Ria Money Transfer** համակարգի կողմից արժանացել է «**Տարվա գործընկեր**» մրցանակի:
- » ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն արժանացել է «**Visa համակարգով Apple Pay և Google Pay նախագծերի արագ և անխափան իրականացում**» մրցանակին:
- » ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը Հայաստանի ֆոնդային բորսայի և Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժանացել է «**Կորպորատիվ արժեթղթերի լավագույն շուկա ստեղծող**» մրցանակին:

2022թ. ինչպես ՀՀ տնտեսության այնպես էլ ֆինանսական համակարգի համար բարձր տեմպերով վերականգնման տարի էր: Չնայած աշխարհաքաղաքական բարդ իրողություններին և զարգացած երկրների և ՀՀ ԿԲ կողմից վարվող կրճատողական դրամավարկային քաղաքականությանը՝ արտահանման ծավալների աճը, աշխատուժի և կապիտալի զգալի ներհոսքը հանգեցրեցին ֆինանսական համակարգում էական հաջողությունների: Դրանք դրսևորվեցին ներդրումների աճի, ներգրավված միջոցների ավելացման և շահութաբերության բարձր մակարդակի միջոցով: 2022թ.-ին էականորեն բարելավվել է նաև բանկային համակարգի ռիսկերի կլանման հնարավորությունը զգալիորեն ավելի բարձր կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների շնորհիվ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը ևս հաջող տարի գրանցեց՝ գերազանցելով սահմանված թիրախային ցուցանիշները:


2022թ.-ի տարեկան արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 357,510 մլն ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 32.0%-ով կամ 86.6 մլրդ ՀՀ դրամով: Բանկի ակտիվների վերջին տասը տարիների միջին աճի տեմպը կազմել է 12.1%:

Ընդհանուր ակտիվներ, մլն. ՀՀ դրամ




Ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 72.5%:

31.12.2022



- Հաճախորդներին տրված վարկեր
- Ներդրումային արժեթղթեր
- Դրամական միջոցներ
- Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ
- Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ
- Այլ ակտիվներ


31.12.2021




(մլն ՀՀ դրամ)

	2021	2022	Փոփոխություն	%
Ակտիվներ, այդ թվում՝	270,907	357,510	86,603	31.97%
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	214,061	259,109	45,048	21.04%
Հաճախորդներին տրված վարկեր և փոխադրություններ	151,253	166,446	15,192	10.04%
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15,976	41,205	25,229	157.92%
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	32,972	42,427	9,455	28.68%
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	13,860	9,032	-4,829	-34.84%
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	79.02%	72.48%		

31.12.2022



31.12.2021



Չնայած այն հանգամանքին, որ Հաճախորդներին տրված վարկերը 2021 թ.-ի համեմատ գերակատարվել են 10.04 տոկոսով, իսկ Պահանջները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ գերակատարվել են 157.9 տոկոսով, նախորդ տարվա համեմատ եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը նվազել է՝ կազմելով 72.5%՝ նախորդ տարվա 79.0%-ի դիմաց:


2022թ.-ի ընթացքում Բանկին հաջողվեց ապահովել վարկային պորտֆելի էական աճ՝ հավատարիմ մնալով իր առաջնահերթություններին: Այս ուղղությամբ 2022թ.-ին իրականացված գործընթացները ներկայացված են ստորև.

- » Բանկի և FMO Նիդերլանդների ձեռնարկատիրական զարգացման բանկի միջև դեռևս 2021թ.-ին կնքված «NASIRA» ծրագրի շրջանակներում ստացված 10 մլն ԱՄՆ դոլար երաշխիքի սահմանաչափը, որը նախատեսված էր սպառել 3 տարվա ընթացքում, արդյունավետ աշխատանքի արդյունքում հաջողվեց ամբողջությամբ օգտագործել շուրջ 1.5 տարում: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել 2022թ. սկսել բանակցություններ երաշխիքի սահմանաչափը կրկնապատկելու ուղղությամբ, ինչը Բանկին հնարավորություն կտա շարունակել բավարարանշարժ գույքի գրավ չունեցող տնտեսվարողներին առաջարկել մրցունակ, եկամտաբեր և շուկայում նմանը չունեցող վարկային գործիքներ:
- » Տարեսկզբին վերանայվել են բիզնես վարկավորման գործընթացները կարգավորող հիմնական ներքին իրավական ակտերը, ինչը հնարավորություն է տվել վարկավորման ողջ գործընթացը դարձնել առավել ճկուն, արագ և արդյունավետ:
- » 2022թ. Բանկում ձևավորվել է լիզինգի գործառնությունների ստորաբաժանում և համալրվել աշխատակիցներով: Տարվա երկրորդ կեսից սկսած գործընկեր խորհրդատվական կազմակերպության հետ համատեղ վերամշակվել են լիզինգի հետ կապված գործընթացները, և Բանկի աշխատակիցների համար իրականացվել են լիզինգի դասընթացներ: 2022թ.-ի դեկտեմբեր ամսից Բանկը սկսել է ընդունել լիզինգի տրամադրման հայտեր:
- » 2022թ.-ին ընդլայնվել է համագործակցությունը տարբեր կառուցապատողների հետ առաջնային շուկայից բնակարանների ձեռքբերման ֆինանսավորման նպատակով:
- » «Մուրան»ՍՊԸ-ի հետ համատեղ ներդրվել է էլեկտրոմոբիլների ձեռքբերման նոր պրոդուկտ: Համագործակցության շրջանակներում հաճախորդների վարկունակության գնահատման համար մշակվել է ամբողջովին նոր սքորինգային համակարգ:

2022թ.-ի տարեվերջի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի մնացորդը կազմել է 166,446 մլն ՀՀ դրամ: 2021թ.-ի համեմատ ցուցանիշի ավելացումը կազմել է 10.0% կամ 15,192 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 12.0%:


2022թ.-ին Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր ակտիվների 46.6%-ը, նախորդ տարվա 55.8%-ի դիմաց, ինչը պայմանավորված է ներգրավված կարճաժամկետ միջոցների առաջանցիկ աճով և Բանկի ակտիվների և պասիվների կառավարման սկզբունքների՝ իրացվելիության անհրաժեշտ մակարդակի պահպանմամբ:

Հաճախորդներին տրված վարկեր, մլն ՀՀ դրամ




Բանկի կողմից տրամադրված վարկերում հիփոթեքային վարկերի ծավալը՝ 2022թ.-ի տարեվերջի դրությամբ կազմել է 26,652 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 23,083 մլն ՀՀ դրամի դիմաց, աճը՝ 15.5%: Բանկի կողմից տրամադրված գրավով ապահովված սպառողական վարկերը 2021թ.-ի համեմատ աճել են 6,430 մլն ՀՀ դրամով կամ 24.7%-ով և 2022թ.-ի վերջի դրությամբ կազմել են 32,508 մլն ՀՀ դրամ: 2022թ.-ին աճել են նաև գյուղատնտեսական վարկերը և այլ սպառողական վարկերը (29.3% և 37.2 %), սակայն նվազել են ոսկու գրավով և անգրավ սպառողական վարկերը՝ համապատասխանաբար -25.1%, -7.6%-ով: Կորպորատիվ հաճախորդների վարկավորման ծավալները հաշվետու տարվա ավարտին կազմել են 89,760 մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 8.4%-ով:

**Տրամադրված վարկերի կառուցվածք
31.12.2022**




**Տրամադրված վարկերի կառուցվածք
31.12.2021**




2022թ.-ի վերջի դրությամբ ընդհանուր վարկային պորտֆելում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռը գրեթե մնացել է անփոփոխ, ֆիզիկական անձանց վարկերի տեսակարար կշիռն ավելացել է 0.3%-ով և կազմել՝ 47.3%:

31.12.2022




31.12.2021



2022թ.-ի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց իրականացնել ակտիվ գործունեություն արժեթղթերի շուկայում՝ ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ:


2022թ.-ի վերջի դրությամբ Բանկի ներդրումային արժեթղթերի պորտֆելը կազմել է 51,458 մլն ՀՀ դրամ: 2021թ.-ի համեմատ ցուցանիշի ավելացումը կազմել է 10.0% կամ 4,625 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 20.5%:

Ներդրումային արժեթղթեր, մլն ՀՀ դրամ




Ներդրումային պորտֆելում ՀՀ պետական պարտատոմսերի տեսակարար կշիռն ավելացել է 2.2%-ով և կազմել՝ 64.5%:

31.12.2022



31.12.2021



2022թ.-ի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 305,031 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 32.5%-ով կամ 74,745 մլն ՀՀ դրամով:


Ընդհանուր պարտավորություններ, մլն. ՀՀ դրամ




Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդների ժամկետային ավանդների և ցպահանջ միջոցների ավելացմամբ:

Տարեկերջին Բանկի կողմից Միջազգային ֆինանսական կազմակերպություններից և ոչ ռեզիդենտ բանկերից ներգրավված փոխառությունները կազմել են 45,563 մլն ՀՀ դրամ կամ պարտավորությունների 14.9%-ը: 2021թ.-ի համեմատ ներգրավված միջոցները նվազել են 21.7%-ով: Վերոնշյալը համահունչ է միջազգային շուկաներում ՀՀ տնտեսության համեմատ տոկոսադրույքների էական բարձրացմանը: Այնուամենայնիվ, Բանկը երկու գործընկերոջ հետ 2022թ. ընթացքում կնքել է ընդհանուր 20մլն ԱՄՆ դոլարի ծավալով նոր պայմանագրեր: Բանկն ակտիվորեն շարունակել է համագործակցությունը մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ Նիդերլանդների զարգացման բանկ (FMO), DEUTSCHE INVESTITIONS UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպություն (DEG), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD), Համաշխարհային բանկ (WB), Հարավարևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամ (EFSE), Incofin Investment Management, ResponsAbility Global Microfinance Fund, Blue Orchard, Եվրասիական զարգացման բանկ (EDB), SYMBIOTICS SICAV ընկերություն և այլ ֆինանսական կազմակերպություններ:

Միջազգային ներգրավումներ, մլն ՀՀ դրամ




31.12.2022




- Միջազգային և այլ ֆին. կազմ. ստացված միջոցներ
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ միջոցներ
- Ժամկետային ավանդներ
- Պարտավորություններ բանկերի նկատմամբ
- Բանկի կողմից թողարկված արժեթղթեր
- Այլ պարտավորություններ
- Ստորադաս փոխառություն

31.12.2021




Ժամկետային ավանդները հաշվետու տարվա ավարտին կազմել են 87,677 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 28.7%-ը և 2021թ.-ի համեմատ ավելացել են 22.8%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 15.4%: Մեկ տարվա ընթացքում իրավաբանական անձանց ժամկետային ավանդներն աճել են 40.9%, իսկ ֆիզիկական անձանց ավանդները՝ 19.0%-ով:

Ժամկետային ավանդներ, մլն ՀՀ դրամ




31.12.2022



■ իրավաբանական
անձինք


■ ֆիզիկական անձինք

31.12.2021




Բանկի ընթացիկ հաշիվներն ու ցպահանջ միջոցները հաշվետու տարվա ավարտին կազմել են 141,736 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 46.5%-ը: 2021թ.-ի համեմատ ցուցանիշն ավելացել է 165.7%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 12.8%: Իրավաբանական անձանց միջոցների տեսակարար կշիռը կազմել է 60.7%, իսկ ֆիզիկական անձանց միջոցների տեսակարար կշիռը՝ 39.3%:

Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ միջոցներ, մլն ՀՀ դրամ



2022թ.-ի վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 52,479 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 11,858 մլն ՀՀ դրամով կամ 29.2%-ով: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում և շահաբաժինների վճարում: Ընդհանուր կապիտալի ցուցանիշի փոփոխությունը հիմնականում պայմանավորված է 2022թ.-ի տարեկան գործունեության արդյունքում գեներացված 13,172.5 մլն ՀՀ դրամ զուտ շահույթով: Կապիտալի վրա բացասական ազդեցություն է ունեցել արժեթղթերի վերագնահատման պահուստների փոփոխությունը:


Ընդհանուր կապիտալ, մլն ՀՀ դրամ



2022թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմել է 9,366,725 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի Կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,873,375 սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2022թ.-ի ընդհանուր կապիտալի փոփոխության արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 28,014 ՀՀ դրամ՝ 2021թ.-ի 23,071 ՀՀ դրամ ցուցանիշի համեմատ աճելով 21.4%-ով:

Բանկի բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի դինամիկան, ՀՀ դրամ




Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 23,302 մլն ՀՀ դրամ՝ ավելանալով 22.6%-ով կամ 4,294 մլն ՀՀ դրամով:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է Հաճախորդներին տրված վարկերի գծով ստացված տոկոսային եկամուտների 2,937 մլն ՀՀ դրամ կամ 19.5% աճով, որը կազմել է ընդհանուր տոկոսային եկամուտների 77.3%-ը՝ նախորդ տարվա 79.3%-ի դիմաց:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքում բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 2.3% նախորդ տարվա 0.8%-ի փոխարեն՝ արդյունքում գեներացնելով 540 մլն ՀՀ դրամի եկամուտ: Ներդրումային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 27.6%-ով և կազմել 4,156 մլն ՀՀ դրամ, ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 17.8% նախորդ տարվա 17.1%-ի փոխարեն:


Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքը բերված է ստորև.

31.12.2022



- Հաճախորդներին տրված վարկերից
- Արժեթղթերի պորտֆելից
- Բանկերում և այլ ֆին. կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից
- Ռեպո պայմանագրերից
- Այլ

31.12.2021



Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 11,657 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 9.5%-ով կամ 1,010 մլն ՀՀ դրամով:

Բանկի հաճախորդների ցպահանջ և ժամկետային ավանդների դիմաց կատարված ծախսերը 2022թ.-ին կազմել են 5,695 մլն ՀՀ դրամ, իսկ տեսակարար կշիռը ընդհանուր տոկոսային ծախսերում կազմել է 48.9%: 2021թ. համեմատ ծախսերն ավելացել են 40.6%-ով, ինչն օրինաչափ է պորտֆելների աճին զուգահեռ:


2021թ.-ի համեմատ նվազել է Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից նեգրավված վարկերի գծով ծախսերի տեսակարար կշիռը՝ 39.7%-ի դիմաց կազմելով 32.5%: Նշված ծախսերը կրճատվել են 10.3%-ով կամ 437 մլն ՀՀ դրամով, որը հիմնականում պորտֆելի նվազման արդյունքն է:

Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերը կազմել են 357 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա ցուցանիշից պակաս լինելով 54.8%-ով: Վերջինս հաշվետու տարվա ընթացքում իրականացված արժեթղթերի մարման արդյունքն է:


2022 թ.-ին Բանկի կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են 11,644 մլն ՀՀ դրամ՝ 2021թ.-ի համեմատ ավելանալով 3,284 մլն ՀՀ դրամով կամ 39.3%-ով:

Բանկի զուտ տոկոսային մարժան 2021թ.-ի համեմատ ավելացել է 0.5 տոկոսային կետով և կազմել է 3.7%:

31.12.2022



31.12.2021



Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են մոտ 4,373 մլն ՀՀ դրամ՝ 2021թ.-ի համեմատ աճելով 97.6%-ով կամ մոտ 2,160 մլն ՀՀ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերը կազմել են 1,652 մլն ՀՀ դրամ՝ 2021թ.-ի համեմատ աճելով 51.4%-ով կամ 561 մլն ՀՀ դրամով:


Արդյունքում 2022 թ.-ին Բանկի զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով ստացած եկամուտները կազմել են 2,721 մլն ՀՀ դրամ՝ գերազանցելով 2021թ.-ի համապատասխան ցուցանիշից 1,599 մլն ՀՀ դրամով կամ 142.4%-ով: 2021թ.-ի համեմատ աճել են հիմնականում վճարահաշվարկային և վճարային քարտերով գործառնություններից միջնորդավճարները:

2022թ.-ի ընթացքում Բանկն արտարժույթային գործառնություններից գեներացրել է 8,920 մլն ՀՀ դրամի զուտ եկամուտ: 2021թ.-ի համապատասխան ցուցանիշից եկամուտներն ավել են 7,370 մլն ՀՀ դրամով կամ 475.6%-ով :

Բանկի ընդհանուր վարչական ծախսերը կազմել են 8,856 մլն ՀՀ դրամ 2021թ.-ի 7,387 մլն ՀՀ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշի 19.9% տարբերությունը պայմանավորված է անձնակազմի պահպանման համար իրականացված ծախսերի աճով, որը 2021թ.-ի համեմատ ավելացել է 1,057 մլն ՀՀ դրամով:


2022 թ.-ին Բանկի կողմից ստացված զուտ շահույթը կազմել է 13,172 մլն ՀՀ դրամ:

Բանկի շահույթ, մլն ՀՀ դրամ



Ստորև բերված են Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները:

Բանկի շահութաբերության գործակիցներ



Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 7,031 ՀՀ դրամ:

2022թ.-ին Բանկը, որպես ներդրումային ծառայությունների մատուցման շուկայի առաջատարներից մեկը, շարունակեց ուշադրության կենտրոնում պահել ներդրումային ծառայությունների մատուցման ոլորտը և մեխանիզմներ կիրառեց մատուցվող ծառայությունների (պահառություն, բրոքերիջ, տեղաբաշխում, արժեթղթերով գործարքների հետ կապված վերլուծությունների կազմում, հրապարակում) որակի բարելավման նպատակով: Ստորև բերված են այս ուղղությամբ իրականացված միջոցառումները.

- » Ցածր ծախսատարությամբ ARARATBANK Trading Platform (այսուհետ՝ ATP) առևտրային հարթակի գործարկում, որի հետևանքով հաճախորդներին տրամադրվում է հնարավորություն գործառնություններ իրականացնել միջազգային շուկայում ավելի քան 5000 ֆինանսական գործիքով (5000 բաժնետոմս և ETF, 60 արժույթային զույգ, 40 ինդեքս, 20 ապրանքահումքային ակտիվ):
- » Բանկի կայքում ATP առևտրային հարթակի ժամանակավոր էջի, միաժամանակ նաև հիմնական մրցունակ կայքի (landing page) ստեղծման, ինչպես նաև հեռախոսային հավելվածների (IOS, Android) վերաբրենդավորման աշխատանքներ:
- » AraratMobile հավելվածով հաճախորդի կողմից բրոքերային հաշվի ինքնուրույն համալրման աշխատանքների նախաձեռնում:
- » Հաճախորդների համար ուսումնական դասընթացների կազմակերպման շրջանակում ուսումնական դասընթացների նկարահանումներ:
- » Բանկում ռեեստրավարման և պահառուական (ԲՌՊ) ծառայությունների միջնորդավորման գծով հաճախորդներին մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացում:
- » Տեղական և միջազգային շուկաներում բրոքերային ծառայությունների մատուցման սակագների և պայմանների վերանայում: Միջազգային շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման շրջանակում տրվել են ոչ բավարար ծածկույթով (լներիջով) գործարքների կնքման հնարավորություններ, սահմանվել են լներիջի մրցունակ շեմեր, բրոքերային ծառայություններին կից հաճախորդներին մատուցվող հարակից ծառայություններ՝ ըստ առանձնացված պրոֆեսիոնալ (Ստանդարտ և VIP) և ոչ պրոֆեսիոնալ/սկսնակ հաճախորդների:
- » ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԹՐԵՅԴԻՆԳ՝ Հայաստանում առաջին ներդրումային տելեգրամյան ալիքի գործարկում: Այն 24/7 ռեժիմով գործող հարթակ է, որը միջազգային և տեղական ֆինանսական շուկաների մասին ամենաթարմ նորություններն ու վերլուծությունները հասանելի է դարձնում պոտենցիալ ներդրողների համար՝ հնարավորություն տալով կայացնել արդյունավետ ներդրումային որոշումներ, հարցեր ուղղել բրոքերներին և քննարկումներ ծավալել շահագրգիռ անձանց հետ:

2022թ.-ին Բանկի ռազմավարական առաջնահերթություն համարվող թվային բանկային համակարգը ապահովեց իր շարունակական զարգացումը: Այստեղ ուշադրության կենտրոնում էր մասնավորապես AraratMobile բջջային հավելվածի կատարելագործումը: Այս ուղղությամբ իրականացված միջոցառումներն ու ձեռք բերված հաջողությունները ներկայացված են ստորև.

- » Համակարգի տեխնիկական արդիականացման աշխատանքներ՝ պայմանավորված ArCa, Visa և Master վճարային համակարգերի՝ PSD2 ստանդարտներին անցմամբ:
- » Նոր ֆունկցիոնալների ներդնում՝ այլ բանկի վարկի մարման հնարավորություն, բրոքերային հաշիվների ավելացում և գործարքների հնարավորություն, աղբահանության վճարումների հավաքագրման, կենսաթոշակային հաշիվների ցուցադրման, Swift համակարգով փոխանցումների իրականացման հնարավորություններ:
- » Թվային քարտերի ձեռքբերման հնարավորություն:
- » Անհպում վճարումների հնարավորության ավելացում՝ **GOOGLE PAY և APPLE PAY**:
- » «**Flight as a guest**» ծառայության ներդնում և արդեն գործող «**Flight**» ծառայության խթանում և զարգացում:
- » Միջազգային փոխանցումների «**Visa direct**» ծառայության գործարկում:
- » 10 հատ VTM (Virtual Teller Machine) բանկային ավտոմատացված մեքենաների ձեռք բերում և ծրագրային ապահովման առաջին տարբերակի գործարկում:
- » Թվային բանկինգի կառավարման համակարգում գործարքների սահմանաչափերի կառավարման և կրկնակի հաստատման մեխանիզմների ներդրում:
- » AraratMobile հավելվածի օգտատերերի զգալի ավելացում:

Հաճախորդների գոհունակությունը Բանկի առաջնային նպատակներից է՝ հիմնված մարդակենտրոն սպասարկման, բանկային պրոդուկտների բազմազանության, մրցունակ սակագների, գործընկերության և պատասխանատվության վրա: Այս համատեքստում Բանկը սպասարկող անձնակազմին դիտարկում է որպես բանկ-հաճախորդ համակարգի կարևորագույն ներկայացուցիչ, ինչպես նաև բանկային ծառայությունների վաճառք իրականացնող առաջնային օղակ: Ուստի, սպասարկող անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունն ու հաճախորդների հետ հաղորդակցվելու և վաճառքը արագ ու գրագետ իրականացնելու հմտությունները մշտապես գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում:


Դեռևս 2020թ.-ին մեկնարկած վերաբրենդավորման գործընթացին զուգահեռ 2021-2022թ.-ին Բանկը փորձել է նաև նորովի ձևակերպել Բանկի հիմնարար արժեքները, որոնք կհանդիսանան հիմնասյուներ նոր կորպորատիվ մշակույթի ձևավորման համար և կնպաստեն հաճախորդների նկատմամբ մոտեցումների փոփոխությանը՝ հաճախորդակենտրոն սկզբունքների ձևավորմանը և նրանց բավարարվածության ու լոյալության մակարդակի պահպանմանն ու բարձրացմանը:

Կարևորելով սպասարկող անձնակազմի պրոֆեսիոնալիզմը, հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը և համալիր ծառայությունների մատուցումը՝ Բանկը շարունակաբար իրականացնում է համապատասխան քայլեր հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) համակարգի զարգացման ուղղությամբ: Այս հանգամանքը կարևորվում է նաև՝ ելնելով ռազմավարության հիմքում դրված ինտենսիվ աճի և խաչաձև վաճառքներ իրականացնելու սկզբունքից:


Մարտահրավերներով ու խնդիրներով լի հաշվետու տարին հաճախորդների հավատարմության մակարդակի պահպանման լավագույն ցուցիչն է: Զգուշավոր և գրագետ քաղաքականության արդյունքում Բանկին հաջողվել է ապահովել վերջին մեկ տարվա ընթացքում ակտիվ հաճախորդների թվաքանակի 36.6% աճ, որտեղ ֆիզիկական անձանց բաժին է ընկել 94%, իրավաբանական անձ հաճախորդներին՝ 6%: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա ընթացքում օնլայն տիրույթում անկանխիկ գործարքների քանակի ավելացումը փաստում է նաև AraratMobile բջջային հավելվածի արդյունավետության մասին:

Սուր մրցակցային և իրավառազմական-համաճարակային պայմաններում 2022թ.-ին Բանկը պահպանել է իր հաճախորդների կայուն բազան և 2021թ.-ի համեմատ կտրուկ ավելացրել հաճախորդների քանակը :

31.12.2022



31.12.2021



■ Իրավաբանական
անձինք

■ Ֆիզիկական
անձինք

Հաշվետեր

220,646

+24.9%

Քարտապան

112,709

+17.2%

Մոբայլ
օգտատեր

51,569

+162.0%

Ավանդատու

8,412

Ներքին հսկողական համակարգը Բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարրերից է: Ներքին հսկողական համակարգն ուղղված է ապահովելու և զարգացնելու Բանկի գործունեության արդյունավետությունը, աջակցելու Բանկին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու շարունակական բարելավման միջոցով:

Բանկում ներդրվել և շարունակաբար կատարելագործվում է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգ, այդ թվում՝ ռիսկերի գնահատման վրա հիմնված Բանկի ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման, ստուգումների իրականացման և հետստուգումային հսկողության (Follow up) գործառույթ:

Ներքին աուդիտի գործառույթը, որը ներդրվել է ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան, ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման (assurance) գործունեության իրականացում՝ ուղղված Բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Այդ նպատակով Ներքին աուդիտի կողմից աշխատանքային ծրագրերի կազմման գործընթացում հիմնականում ստուգումների շեշտը դրվում է Բանկի կողմից իրականացվող գործարար գործընթացների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման և ռիսկերի բացահայտման վրա:

Ստուգումների և գնահատումների արդյունքները նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով Ներքին աուդիտի առաջարկությունների և եզրակացությունների հիման վրա ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված Բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի ներքին հսկողական համակարգը գործում է շուկայում արդի զարգացող պահանջներին համահունչ: Համապատասխանության ապահովման խումբը օժանդակում է գործարար գործընթացների իրականացմանը օրենսդրության, նորմատիվ և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև նպաստում է համապատասխանության և կորպորատիվ մշակույթի պահպանմանը:

Իրականացվել են ՀՀ օրենսդրության, ՀՀ ԿԲ կանոնակարգող ակտերի և Բանկի գործառույթների քարտեզագրում և գնահատում, որի նպատակն է դրանց հետագա ավտոմատացումը: Առկա գործընթացների ռիսկերի նվազեցման, արդիականացման և բարելավման նպատակով իրականացվում են գործառնությունների ընթացիկ ստուգումներ և ուսումնասիրություններ:

Համապատասխանության ապահովման խմբի և բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ակտիվ համագործակցությունը հնարավորություն է տալիս ընթացքում բացահայտել, գնահատել առկա խնդիրները և մշակել անհրաժեշտ լուծումներ, որոնք ուղղված են գործող մեխանիզմների բարելավմանը և ընթացիկ հսկողության մեխանիզմների անընդհատության սկզբունքով գործունեության ապահովմանը:

Ներքին իրավական ակտերը ուսումնասիրվում են ըստ առանձին գործառնությունների ՀՀ օրենքներին և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերին համապատասխանության տեսանկյունից:

Վերջին ժամանակներում բանկն առերեսվել է ինչպես արտաքին միջավայրից եկող, այնպես էլ ՀՀ տնտեսությունում և բանկային համակարգում առկա բազում մարտահրավերներին: Բանկը կարողացել է անկայուն աշխարհաքաղաքական իրավիճակում պահպանել իր մրցակցային առավելությունները և նախորդ տարվա ընթացքում ապահովել շահույթի բարձր մակարդակ:

Առկա աշխարհաքաղաքական վիճակը և դրանից բխող ֆինանսական շուկաների անկայունությունը ենթադրվում է, որ կպահպանվի և առաջիկա տարիներին սպասվող ռիսկերին դիմակայելու համար անհրաժեշտ է հետևողական և արդյունավետ աշխատանք բոլոր ռիսկերի կառավարման ուղղությամբ:

Բանկը պլանավորում է պահպանել իրացվելիության, գործառնական, վարկային և շուկայական ռիսկերի ցածր մակարդակը:

Իրացվելիության ցանկալի մակարդակի պահպանման նպատակով, միաժամանակ միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավվող միջոցների տոկոսադրույքների բարձրացման պատճառով, Բանկը կշարունակի տեղական շուկայից ներգրավվող ժամկետային միջոցների կշռի բարձրացումը:

Իրացվելիության ռիսկի կառավարման տեսանկյունից Բանկը նախատեսում է ներդնել միջազգային փորձին համահունչ սթրես թեստավորման համակարգ:

Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով, հաշվի առնելով տնտեսական բացասական զարգացումների և վարկային պորտֆելի որակի վատթարացման սպասումները, Բանկը կշարունակի վարել զգուշավոր վարկային քաղաքականություն՝ միաժամանակ ուշադրության կենտրոնում պահելով գործող վարկային պորտֆելում առկա զգայուն վարկերը և ակտիվ միջոցներ ձեռնարկելով խոցելի ոլորտների վարկերի վերադարձման ուղղությամբ:

ՀՀ ֆինանսական համակարգի մրցակցությանը դիմակայելու, շուկայում կայուն դիրքեր պահպանելու և շահութաբերության ցուցանիշների բարելավման նպատակով Բանկը նախատեսում է ավելի արդյունավետ դարձնել վարկային ռիսկի կառավարման առկա քաղաքականությունը: Նախատեսվում է վերանայել առևտրային վարկերի տրամադրման ժամանակ վարկային ռիսկի գնահատման մեթոդաբանությունը՝ հաշվի առնելով միջազգային փորձը և այն համապատասխանեցնելով տեղական շուկային:

Նախատեսվում է արդիականացնել «Ֆինանսական գործիքներ» ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ 9-ին համապատասխան ֆինանսական ակտիվների դասակարգման մեթոդաբանությունը, ինչի արդյունքում ֆինանսական ակտիվների դասակարգումն առավել ճշգրիտ կիրականացվի:

Անգրավ ՓՄՁ վարկավորման շուկայում մրցակցային դիրքեր գրավելու և անգրավ ՓՄՁ վարկերի պորտֆելը մեծացնելու նպատակով Բանկն իրականացնում է NASIRA ծրագիրը: Այս ծրագիրը դրական է ազդում Բանկի համբավի վրա: Բանկը այս տարի ևս նախատեսում է շարունակել NASIRA ծրագիրը և միաժամանակ մշակել նոր սքորինգային համակարգ՝ խթանելով անգրավ համեմատաբար բարձր եկամտաբերությամբ ՓՄՁ վարկերի պորտֆելի աճը:

Բանկի ռիսկի ախորժակով առաջին մակարդակի ցուցանիշներով սահմանված է Բանկի նպատակային ռիսկի պրոֆիլը, որն իրենից ներկայացնում է ներքին սահմանաչափերի համակարգ, որն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում սկզբնական փուլում հսկողություն իրականացնել Բանկի ռիսկի ախորժակի պահպանման նկատմամբ՝ միաժամանակ չխոչընդոտելով Բանկի գործունեության բնականոն ընթացքին և ակտիվների արդյունավետ կառավարմանը:

Բանկի գործող ռիսկի ախորժակն իր մեջ ներառում է հետևյալ հիմնական ուղենիշները՝

- » Բանկի կողմից ընդունված ռիսկի մեծությունը չպետք է հասնի այնպիսի մակարդակի, որ հանգեցնի Բանկի գործունեության դադարեցմանը՝ այդ թվում, շուկային իրավիճակներում:
- » Անկանխատեսելի կորուստների դեպքում Բանկի կապիտալի մեծությունը պետք է բավարարի Բանկի վարկատու գործընկերների պահանջները:
- » Բանկի կողմից իրականացվող գործառնությունների դեպքում դրամական հոսքերի կառուցվածքը և իրացվելիության բուֆերները պետք է երաշխավորեն հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ժամանակին կատարումը՝ երկարաժամկետ և կարճաժամկետ հատվածներում: Այդ նպատակով Բանկը սահմանել է իրացվելիության գծով մի շարք ցուցանիշներ, որոնք պարբերաբար վերահսկվում են օրական, ամսական և եռամսյակային կտրվածքով:
- » Բանկի ակտիվների և պարտավորությունների գործող կառուցվածքը ապահովում է Բանկի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և համապատասխանում է Բանկի բիզնես մոդելին:
- » Իր գործունեության ընթացքում Բանկը ձգտում է խուսափել կենտրոնացումներից՝ սահմանելով կենտրոնացումների թույլատրելի սահմանաչափեր:
- » Բանկը վարկային պորտֆելի կառավարման նպատակով սահմանել է վարկային պորտֆելի ռիսկի զսպման մի շարք ցուցանիշներ՝ հաշվի առնելով Բանկի վարկային ռիսկի պրոֆիլը, ռազմավարությունը և շուկայում ակնկալվող փոփոխությունները:
- » Բանկն ապահովում է կայուն զարգացում և արդյունավետ գործունեություն երկարաժամկետ հորիզոնում:
- » Բանկը պատշաճ կերպով ապահովում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջները:
- » Իր գործունեության ընթացքում պահպանում է բարի համբավ՝ խուսափելով այնպիսի գործողություններից, որոնք կվնասեն իր գործարար համբավին:

Ռիսկերի կառավարման գործընթացներն իրականացվում են Բանկի Խորհրդի կողմից հաստատված ռիսկի ախորժակի քաղաքականությանը համաձայն և գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում: Բանկում մշտապես ուսումնասիրվում և կիրառվում է միջազգային փորձը՝ բարձրացնելով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ նպատակ ունենալով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ մակարդակը և նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերը:



AraratBank



(+374)10 59 23 23

Buzand St., bldg. 87, prem. 85, 0002 Yerevan, Armenia

info@araratbank.am | araratbank.am